Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Անդրանիկ Բարությանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի դասվարի /15 դ/ժամ/ ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի թափուր տեղի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անվկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում /Ձև 1/,
2. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
3. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/ , միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ,
4. Անձը հաստատող փաստաթուղթ,
5. << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
6. Ինքնակենսագրություն /Ձև 5/,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596 որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն /մասնակցած լինելու դեպքում/: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել համալրել դրանք:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ ամեն օր ժամը $9^{00}$-ից $15^{00}$-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա՝ 2024թ-ի սեպտեմբերի 24 -ին , ժամը $14^{00}$-ին , Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջն. դպրոցում:

Հասցեն՝ Համայնք Մարմարաշեն ,Երևան- Արտաշատ խճուղի 71:

Տեղեկությունների համար զանգահարել 093-97-64-80 հեռախոսահամարով: